
REGISTERED BY AUSTRALIA POST, PUBLICATION No. NARO652

PRICE: \$1.00

ԱՄՍԱԳԻՐ ԱՒՍՏՐԱԼԻՈՑ ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ — ՍԻՏՆԻ MONTHLY BULLETIN OF THE ARMENIAN CHURCH — SYDNEY



SULPH 35 9 Phh ՍԵՊՏԵՄԲԵՐ 1990

ԹԱԳԱՒՈՐ ԵՐԿՆԱՒՈՐ ԶԵԿԵՂԵՑԻ ՔՈ ԱՆՇԱՐԺ ՊԱՀԵԱ

YEAR 35 9 No. SEPTEMBER 1990

<u>ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԺԱՄԵՐ</u>	<u>L</u>	CHURCH OFFICE HOURS
ԵրկուչաբԹիէն–ՈւրբաԹ		From Monday to Friday
Առաւօտեան ժամը 9։00-էն մինչեւ երեկոյեան ժամը 3։00-ը։		$9.00 \ a.m 3.00 \ p.m.$
ՀԵՌԱԽՕՍԻ ԹԻՒԵՐ		TELEPHONES
Առաջնորդարան	938 4816	Diocese
Եկեղեցւոյ Գրասենեակ	419 8056	Church office
Նորայր ՔՀնյ. Բաթանեան	888 5190	Fr. Norayr Patanian
Բարեկեցու Թեան Գրասենեակ	419 6394	
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ ԺԱ	ՄԱՆԱԿԱՑՈՅՑ	
Առաւօտեան ժամերգութիւն		Morning service
<i>Սուրբ Պատարագ</i>		
Հոգեհանգիստ		Requiem service
ԿԱՐԵՒՈՐ ՀԵՌԱԽՕՍԻ ԹԻՒԵՐ	CHURC	H INFORMATION PHONES
Կարօ Սեթեան	958 6761	Garo Setian
Եկեղեցւոյ Ատենապետ		Chairman Church Council
Ֆլորա Արմաղանեան	451 0876	
Տիկնանացի Ատենապետու Հի		Chairlady - Ladies Auxiliary
Փիէր Գաթրրձեան	41:1 7928	Pierre Katerjian
Երիտասարդացի Ատենապետ		Chairman Youth Auxiliary
Ֆրէտ Թովմասեան	805 1713	Fred Thomasian
Պասբէթպօլի պատասխանատու		Basketball Supervisor
Տկն.Հերմինէ Մագլու մեան	427 1534	Mrs. Harmingh Manlauming
կիրակնօրեայի Պատասխանատու		Mrs. Hermineh Mazloumian Sunday School Supervisor
Ցարութիւն Քէօրօղլանեան	807 235K	Hanautian Vanalla
լուսաւորիչ դպրաց դասի Ատենապետ		Haroutioun Keoroghlanian Chairman Church Choir
Եկեղեցւոյ ՍրաՀ	419 6394	Church Edgarian Hall

*ከበቦረቦԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒ*Ն

Բոլոր խորՀրդակատարու Թեանց եւ այլ արձանագրու Թեանց Համար կապ Հաստատել ՄԻ ՄԻԱՅՆ Եկեղեղեցւոյ Գրասենեակի Հետ։

INFORMATION

FOR CHURCH SERVICES AND ANY INFORMATION PLEASE PHONE THE CHURCH OFFICE (02) 419 8056 or A. H. (02) 888 5190

ชนรานจาธบ จนราชมาช งกรม> งายปราบม บายจากจมห



PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

NΣ

Մ. Էջմիածիև¹³ Սեպտեմբեր 1990 Թ

ՄԵԺԱՅԱՐԳ ՄԻԽԱՅԻԼ ՍԵՐԿԷԵՒԻՉ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՄՈՍԿՈՒԱ

Գոհունակունեամը հաստատում ենք Մեր 7 Սեպտեմբեր 1990 Թուակիր նամակը, ի պատասխան Ձեր կարեւոր նամակի, որ Մեզ յանձնուեց Օգոստոս ամսի սկիզբներին։

ိ Այսօր ստիպուած ենք կրկին դիմել Ձեզ, այս անգամ խոր վշտով ու վրդովումով, տեղեկացնելու համար որ Լեռնային Դարաբաղի հայ ազգաբնակչուԹեան վիճակը դարձած է ողբերգական, նաեւ

եկեղեզական կեանքում։

Լեռնային Ղարաբաղի հոգեւոր Առաջնորդը, Պարգեւ Եպիսկոպոս, հաղորդեց Մեզ ԹԷ, Կիրակի 9 Սեպտեմբերին, Ամարասի հայկական վանքում, (հիմնուած 4րդ դարում), հանդիսաւոր պատարագից յե-տոյ, գիշերը երկու անգամ են Թարկուած է յարձակումների, բանա-կային համազգեստով անձանց կողմից, որոնք կրակ են բացած վանքի պատերին, սարսափի մատնելով հոգեւոր ծառայողներին եւ անզէն պահակներին։ Վտանգի տակ են նոր վերաբացուած մեր հինգ վանքերն ու եկեղեցիները եւ մեր հոգեւորականների կեանքը։

Դիմում ենը 25զ ծանր ապրումներով, սակայն տակաւին յոյսով որ 25 բարձր հեղինակունեամբ եւ օրէնքի ուժով եւ ազգունիւն-ների ինքնորոշման իրաւունքով, վերջ կր գտնի Լեռնային Ղարաբա-ղում հայերի ողբերգունիւնը, ինքնավար այդ մարզը դնելով 25 բարեզիդենտական իշխանունեան ներքեւ։ Անիրաւուած հայերի համ-բերունեան բաժակը վաղուց լցուած է եւ նրանք պատրաստ են ազատ մեռնելու քան ստրուկ ապրելու, ինչպէս հերոսները Տերմոպիլէի, վայմիի եւ Կույիկովի։

շեր չափազանց բազմազբաղ եւ տագնապալի այս օրերին, խնդրում ենք մի պահ գոնէ Ձեր ուշադրունիւնը ուղղէիք դէպի Լեռնային Ղարաբաղում տառապող մեր ժողովուրդը եւ Ձեր խաղաղարար արդար մի վճիռով փրկէիք նրանց, յանուն Ձեր հռչակած հումանիստական մեծ գաղափարների, յօգուտ նաեւ ադրբէյջանցի մեր հարեւան ժո-ղովուրդի կեանքի խաղաղունեան։

թոյլ տուէը վերջացնել Մեր խօսքը Լամարտինի տողերով՝ «Ու–

ժեղների փառքը տկարների ազատութիւնն է»։ Խորին յարգանքով եւ օրչնութեամբ՝

13 Սեպտեմբեր 1990 Թ.
Ս. Էջմիածին

ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

A P

digitised by A.R.A.R.@

ՍԵՊՏԵՄԲԵՐ 5-ԻՆ ԵՐԵՒԱՆԻ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

ՎԵՀԱՓԱՌԻՆ ԽՕՍՔԸ

Հարազատ ժողովուրդ Մեր,

1. Ազգովին գտնւում ենք մեր բազմադարեան պատմութեան փոթորկալից ճանապարհի նոր հանգրուանի առաջ, հռչակումովը Հայաստանի Հանրապետութեան, իբրեւ ազատ եւ ինքնիշխան ազգային պետութիւն։

2. Ինչպէս Մեր երջանկայիշատակ նախորդը՝ Տ.Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսը, 1918ի Մայիսի 28ին, Մենք եւս նոյն ոգեշնչումով, նոյն լոյս երազանքներով ողջունում ենք այս պատմական ճռչակումը եւ ընտրութիւնը մեր նոր Հանրապետութեան Նախագաճի, վարչապետի եւ կառավարական կազմի։

Թող Աստուած օրճնի մեր ազգը ճամայն եւ մեր ճայրենի պետութիւնը ազատ, զի առաջեալը Պօղոս պատգամում է մեզ երկու ճազար տարիների բարձունքից՝ «Դուք յազատութեան կոչեցեալ էք եղբարք» (Գաղ. Ե-18)։ Թող Աստուած անվտանգ ու պայծառ պաճի նրանց կեանքի զարգացման ճանապարճը, դէպի իրականացումը մեր ժողովրդի բոլոր արդար սպասումների։

8. Այս հանդիսաւոր պահին, Մենք՝ Հայրապետը Ամենայն Հայոց որ ի Հայաստան եւ որ ի սփիւռս աշխարհի, յանուն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Մեր նուիրական պարտքն ենք համարում բանիւ եւ գործով շարունակելու Սուրբ Էջմիածնի առաքելութիւնը առաւել եռանդով, առաջնորդուած Քրիստոսի Սուրբ Աւետարանի լոյսով եւ մեր ազատատենչ նախնեաց հայրենանուէր ոգով, ի շինութիւն մեր ժողովրդի հոգեւոր բարուական կեանքի, ի նորոգ կառուցում մեր վերածնուած մայր երկրի, եւ ի վերածաղկում մեր ազգային մշակոյթի։

4. Ժամանակն է, որ մեր ժողովուրդը թէ՛ մայր երկրում եւ թէ՛ արտասանմանում ոգեկան նոր թռիչքով դուրս գայ մտածումի եւ գործելու ճին կաղապարներից եւ նոյն առաքեալի խօսքերով՝ «Մաքրեցէք ճին խմորը որպէսզի լինէք նոր զանգուած» (Ա. Կորնթ. Ե-7)։

Հարկ է նաեւ դուրս գալ ազգային մտածողութեան նեղ սահմաններից եւ մեր հարազատ վաւերական ազգայինը ամրապնդել, վերարժաւորել ստեղծագործօրէն, բարձրացնելով այն մեր օրերի համամարդկային ըմբոնումների եւ արժէքների մակարդակին՝ մշակութային, ընկերային եւ քաղաքական կեանքում։

Աստուած եւ աշխարհը համայն վկայ են ահա թէ սուրբ գրական Արարատի ստորոտին, շարունակում է ապրել ու մաքառել բազմադարեան ժողովուրդը հայոց, այսօր իբրեւ ազատ ու ինքնիշխան ազգութիւն, իբրեւ մի մարմին, մի հոգի ու մի կամք, իբրեւ ժամանակակից ժողովրդավար իրաւական մի պետութիւն որ յառաջ է ընթանում ազնիւ պայքարով դէպի աղբիւրը լոյսի։

5. Մնում ենք աղօթող, որ համայն մեր ժողովուրդը իր բոլոր կազմակերպութիւններով, իր բոլոր հասարակական խմբաւորումներով ու գաղափարախօսական հոսանքներով, պայծառ գիտակցութեամբը հայրենիքի անվտանգութեան ու ազգի գերագոյն շահերի, պահի պահպանի իր եղբայրական միասնութիւնը, մտածելու հաւասարակշռութիւնը եւ գործելու օրինական կարգապահութիւնը։ Ջի անիշխանութիւնը ժխտումն է պետութեան ինքնիշխանութեան եւ ժողովրդի ազատութիւնների։

6. Մեր մաղթանքն է որ ինքնիշխան ճանրապետութեանց միութեան մէջ, նաեւ Անդրկովկասի տարածքի ազգութիւնների միջեւ, ամրապնդուեն

169-90

2000-Apm.ccf 2

համերաշխգործակցութեան յարաբերութիւններ, հիմնուած ճշմարտութեան եւ արդարութեան, մարդու իրաւանց եւ ազգութիւնների ազատ ինքնորոշման հրամայականների վրաւ։

Համոզուած էնք, որ այս սկզբունքների կեանքի կոչմամբ, հնարաւոր կը դառնայ իրապէս արդար լուծման ճանապարհը գտնել Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան բնական եւ օրինական պահանջքի, իր ճակատագիրը ինք տնօրինելու, իր ազատ կամքով։ Վասնզի ազգութիւնների միջեւ դժուար թէ խաղաղութիւն եւ եղբայրութիւն հաստատուի առանց յարգելու տուեալ ազգութիւնների ինքնորոշման իրաւունքը։ Այս է, կարծում ենք, մեր օրերին Խորհրդային Միութեան բարձրագոյն ղեկավարութեան որդեգրած վերակառուցման եւ ժողովրդավարութեան նոր, յուսալի քաղաքականութեան հիմքը։

Այս սկզբունքներով առաջնորդուած, անհրաժեշտ է ամէն գնով խուսափել ազգամիջեան արիւնալի առճակատումներից, որոնք ոչ ոքի չեն կարող ոչ մի բարիք խոստանալ։

7. Մենք կոչ ենք անում մեր հայրենի կառավարութեան նորընտիր ղեկավարներին, որ ամեն ջանք ի գործ դնեն ի պաշտպանութիւն մեր ժողովրդի ազնիւ իղձերի կենսագործման՝ իմաստութեամբ ու խորամտութեամբ, զի հայրենիքի կենսական շահերի ամրապնդումը հանդիսանում է գերագոյն հրամայականը։

«Եւ արդ, Տէր Աստուած հարցն մերոց, մեք ամենեքեան հայցեմք ամենառատ յողորմութենէդ քումմէ, զի պահեսցես եւ պահպանեսցես յամայր ամս զնորահռչակ Հանրապետութիւն Հայաստանի, առ ի շնորհել ազգիս հայոց զլուսաւորեալ պայծառակերպում, զվերելք շինարար եւ զխաղաղութիւն կենարար, այժմ եւ միշտ. ամէն»:

> **ՎԱԶԳԷՆ Ա.** ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վազգեն Մանուկեան Հայաստանի Վարչապետ

Հայաստանի Դահյիճը Հրաժարած. Կորպաչովի Վերջնագիրը Կ'երկարաձգուի

Հայաստանի կառավարութիւնը, գլխաւորութեամբ վարչապետ Վլադիմիր Մարգարեանցի, իր ճաւաքական ճրաժարականը ներկայացուց Երկուշաբթի, 18 Օգոստոսին։ Նորընտիր Խորճրդարանը ընդունեց ճրաժարականը եւ վարչապետ նշանակեց Հայոց Համազգային Շարժումի ղեկավարներեն Վազգեն Մանուկեանը։

Խորհրդարանական ժողովին ներկայ 220 երեսփոխաններէն 200 հոգի մասնակցեցան ընտրութեան։ Վազգէն Մանուկեան ընտրուեզաւ 170 ձայնով։

Խորհրդարանը հրաժարեալ վարչապետէն խնդրեց ամիս մը երկարաձգել իր պաշտօնը, մինչեւ նոր դահլիճի մը կազմութիւնը։

Նոր վարչապետը, աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի բնագիտութեան եւ ուսողութեան բաժանմունքը։ Ան կը նկատուի Հ.Հ.Շ.ի գաղափարախօսը եւ պատրաստած էր կուսակցութեան բլաթֆորմը։

__Նախագան Կորպաչովի Նամակը Վեհափառին

Գերագոյն Պատրիարք Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա-ին

Քաղ. Էջմիածին

Ձերդ Սրբութիւն.

Ձեզ եմ դիմում երկրի ճակատագրի համար պատասխանատու պահին։ Մենք պատմական րնտրութիւն ենք կատարել, հասարակութիւնը տոտալիտարից շեշտակիօրէն թեքելով դէպի դեմոկրատական պետութիւն, ունիտարից դէպի սուվերեն. ազատ ճանրապետութիւնների միութիւն։ Այդպիսի արմատական անցումը, ի ճարկէ, առանց պրոբլեմների եւ կոնֆլիկտների չի իրականացւում։ Մասսայական գիտակցութիւնը չի հասնում քաղաքական վերափոխումների նետեւից։ Հասարակութեան անբաւարար դեմոկրատական կուլտուրան երբեմն յանգեցնում է այն բանին, որ ազատութեան, իրաւունքների, անհատի արժանիքի եւ անկախութեան ընդլայնումը զուգակցւում է սանձարձակութեան, ամենաթողտուութեան ճետ։ Մարդիկ այլեւս չեն ապրում սարսափի մթնոլորտում, բայց դեռեւս չեն սովորել յարգել օրէնքը։ Այդ պատճառով մեզ սպասում է լուրջ ստուգում, կը յաջողուի արդեօք, դեմոկրատօրէն իրաւական շրջանակների մէջ մտցնել այդ պրոցեսները, պմենուրէք ապահովել կարգ ու կայունուphil:

Են ձեզ եմ դիմում, խնդրելով ձեր ամբողջ մեծ ճեղինակութիւնը, ճարուստ կենսափորձն ու մարդասիրութեան բարձրագոյն զգացումը եւ ձեր ժողովրդի ճակատագրի համար պատասխանատուութեան զգացումն օգտագործել օգնելու ճամար անդրկովկասում արիւնաճեղութեան, ազգամիջեան բախումների, մայրերի, ծերերի, երեխաների տառապանքների դադարեցմանը։

Հենց այդ նկատառումներով է թելադ-

րուած նաեւ «ԽՍՀՄ Օրէնսդրութեամբ չնախատեսուած զինուած կազմաւորումների ստեղծումն արգելելու եւ ապօրինաբար պանելու դէպքերում զէնքն առգրաւելու մասին» ԽՍՀՄ Պրեզիդենդի հրամանագիրը։ Ջէնջի լանձնումը կատարւում է ամենուրեք ամբողջ երկրում։ Բայց, կարծում եմ, դուք ինձ ճետ կո ճամաձայներ, որ այդ գործողութիւնն առանձնայատուկ նշանակութիւն ունի անդրկովկասի համար։ Անցած տարիները ցոյց են տուել, որ առճակատման ու թշնամանքի ճանապարհներին հնարաւոր չէ նորմալ յարաբերութիւններ ստեղծել ճանապարհներին, հնարաւոր չէ նորմալ յարաբերութիւններ ստեղծել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ, արդարացի հիմունքներով լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը։ Համոզուած եմ, որ հրամանագրի կատարումը պայմաններ կը ստեղծի նորմալացման պրոցեսի առաջընթացի համար։ Բնական է, ամեն ինչ արուհյու է, որպէսզի այդ դէպքում խուսափենք արիւնաճեղութիւնից**։**

bu jui ghinhu bi pupap bu gamamտում խաղաղութեան ու մարդկանց անվտանգութեան շաներով, նայ ժողովրդի բարձրագոյն շաներով թելադրուած ձեր անփոփոխ դիրքը։ Շատ յոյսով եմ, որ երկրի շատ հեղինակաւոր կրօնական գործիչներից մէկից ելնող անբոնութեան, խաղաղութեան ու մարդասիրութեան կոչը բարերար ազդեցութիւն կ'ունենալ Անդրկովկասի իրադրութեան

Ձեր ըմբռնման անկեղծ յոյսով եւ մեծ յարգանքով՝

Մ. ԿՈՐՊԱՀՈՎ

խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Պրեզիտենտ

30 3nijhu 1990

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱ ՍԱՀԱԿԵԱՆ

Ընտրութեանց նիստի աւարտին, առանձին ընտրութեամբ, Հայաստանի նախարարաց Խորջուրդի (կառավարութիւն) քարտուղար ընտրուեցաւ երեսփոխան Արա Սահակեանը, գաղտնի քուէարկութեամբ ան ստազաւ 172 կողմ եւ 24 դէմ ձայներ։

ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ազգային-եկեղեցական գործակցութիւնը եւ գործունէութեան րնթացքը յաջողութիւններու հասնելու համար, անհրաժեշտ կարիք ունի իր գործակից շրջանակներու միասնական, աջալուրջ եւ բծախընդրօրէն կատարուած աշխատանքներուն։

քրիստոնէական կեանքի մէջ, մեր յարաբերութիւնները, հանդէպ մեր քրիստոնեայ եղբայրներուն եւ բոյրերուն, ենէ կատարուին Տամերաշխութեամբ, փոխադարձ սիրով եւ անկեղծ տրամադրութիւններով, երկուստեր սրտի գոհունակութիւնը եւ սիրոլ ջերմ միու-

թիւնն է որ իր հիմը կր դնէ այդ զործակցութեան մէջ։

րւրաքարչիւր ազգի գոյատեւումը կամը ջուած է միասնականու թեան ոգիին վրայ եւ եթէ այդ ոգին պակսած ըլլայ իր զա**ւ**ակներու գործունեունեան եւ փոխըմբոնումին մեջ, այդ ժողովուրդը չի կրնար յառաջացում ունենալ եւ իր ինքնորոյն դիրքը գրաւել մարդկային հասարակունեան մէջ։ Մեր ժողովուրդի բոլոր զաւակ ներու դարաւոր տենջը եւ երազը եղած է միշտ իրականացած տեսնել այդ միասնականութեան ոգին։ Մեր եկերեցական Հայրերը իրենց ամբողջ կեանքի ընթացքին, միշտ ջանացած են այդ միասնականութեան Տոգին ներմուծել Տայ ժողովուրդի բոլոր զաւակներուն ու միշտ աղօթած որ այդ միասնականութիւնը անսասան եւ անխորտակելի մնայ մեր ազգային բոլոր հատուածներուն մէջ։ Հայ բանաստեղծներ, միշտ ունեցած են այդ սիրոյ տէնջը եւ իրենց բա-Նաստեղծունիւններով եւ արձակ գրունիւններով միշտ շեշտած են միասնականութեան կարեւորութեան եւ փոխադարձ ոմբռնողութեան

ան հրաժեշտունեան մասին։

Մեր ազգային պատմութիւնը, յանախ արձանագրած է յաջողութիւններ, շնորհիւ իր զաւակներու զոհաբերութեան եւ միասնակամ ոգիին, որ ամէն մէկ հայու կուրծքը հպարտութեամբ լեցուցած է իր ազգային պատկանելիունեան համար։ Մեր պատմունիւնը մոխ է այնպիսի ժամանակագրական դիպուածներով, ուր մեր ժողովուրդի զաւակները ձեռը-ձեռըի տուած, միասնականութեան եւ ազգային Տպարտունիւնը իրենց սրտերուն, յարատեւ պայքարած են յանուն մեր՝ Սուրբ Հաւատքին եւ Հայրենիքի ազատութեան։ Վարդանանց Դիւցազնամարտով, Մեր ժողովուրդը փաստեց այն միասնականութեան Տոգին, պաշտպանելով մեր Սուրբ Հաւատքը, Մուրբ Եկեղեցին եւ snnn swjpbbh: ແນັກນັ້ວ ນີ່ພາຍພາຍປຸກເປອນນີ້, ກົກປານ ໜ້າປະກຸ ພັກກິເນກ թափեցին եւ սակայն մեզի փոխանցեցին մեր պապերու սուրբ եւ ազգային հպարտունիւնը։ Ինչպէս որ ամէն մէկ ժողովուրդի եւ իրենց նենգամտութեամբ եւ դաւածանութեամբ Տարուած կր Տասցնեն իրենց պատկանած Տատուածին, ղժբախտաբար մեր պատմութեան մէջ վնաս ՝ հասցուցած են մեր ժողովուրդին։ Անոնց անունները սեւ մուր մըն՝ են՝ մեր պատմութեան՝ մակատին եւ ունին տխուր յիշատակներ միայն։ Մեր Սուրբ Հաւատքը, Եկեղեցին եւ Ազգը կը գոյատեւէ ի գենուկս ամէն տեսակ ղաւածաններու եւ ազգուրացներու։

Միասնականունեան այդ հոգին, Թող տիրապետէ մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն մէջ, միանալու իրար հետ քրիստոնեական եւ Տաւատքի սիրով եւ Թող Տիրոջ Տովանին պահապան ըլքայ մեզի, որպէսցի միասնականունեամբ եւ Տաւատքի ջերմ սիրով եւ րմբոնումով փարինը մեր եկեղեցիին եւ ազգային սրբունիւններուն, առաքելով մեր աղօթըները առ բարձրեալն Աստուած եւ փառաւորելու զինք

մինչեւ լաւիտեան։

ՆՈՐԱՅՐ ՋՀՆՅ. ԲԱԹԱՆԵԱՆ

Հ ռ չ ա կ ա գ ի ր Հայաստանի Անկախութեան Մասին

Հայկական ԽՍՀ Գերազոյն Խորհուրդը՝ արտայայտելով Հայաստանի ժողովրդի միաս- նական կամքը, գիտակցելով իր պատասխա- նատուութիւնը հայ ժողովրդի ճակատագրի առջեւ համայն հայութեան իրձերի իրա- կանացման եւ պատմական արդարութեան վերականգնման գործում, ելնելով Մարդու իրաւունքների համրնդհանուր հոչակագրի սկզբունքներց եւ միջաղգային իրաւունքի հանրահորիը,

րոչման իրաւուներ, ընսագործելով ազդերի ազատ ինջնո–

Հիժնուելով 1989 Թուականի Դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարարադի վերամիաւորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի եւ Լեո-Նային Ղարարադի Աղգային Խորհրդի համասեղ որոչման վրայ,

զարդացնելով 1918 Թուականի Մայիսի 28-ին ստեղծուած անկախ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդավարական աւանդոյթեները,

իրաշական Հասարակարգի ստեղծումը,

Հ Ռ 2 Ա Կ Ո Ւ Մ — Է ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ

- 1.- Հայկական ԽՍՀ-Ե վերանուանւում վ Հայաստանի Հանրապետութիւն, կրճատ՝ Հայաստան։ Հայաստանի Հանրապետութիւնը ունի իր դրօշր, գինանչանը եւ հիմնը։
- 2.- Հայաստանի Հանրապետու Թիւնը ինքնիչխան պետու Թիւն է՝ օժտուած պետական իչխանու Թեան գերակայու Թեամը, անկախու-Թեամը, լիիրաւու Թեամը։

Հայաստանի Հանրապետութեան ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնը եւ օրէնքները։

3.- Հայոց պետականութեան կրողը Հայաստանի Հանրապետութեան իրագործում է անմիջականօրէն եւ ներկայագործում է անմիջականօրէն եւ ներկայատանի Հանրապետութեան սաշմանադրութեան եւ օրէնքների հիման վրայ։

Հանրապետութեան ժողովրդի անունից Հանդես գալու իրաւունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն ԽորՀրդին։

4.- Հայաստանի Հանրապետու Թեան տարածքում բնակուող բոլոր քաղաքացիների Համար սահմանւում է Հայաստանի ՀանրապետուԹեան քաղաքացիու Թիւն։

Արտերկրի հայութիւնը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութեան իրաւունք ունի։

Հայաստանի Հանրապետու թեան բաղաթացիները գտնւում են նրա պաչտպանու թեան եւ աջակցութեան ներթոյ։

դաւանանթից: վում է իր քաղաքացիների ապատ ու իրա-Հայաստանի Հանրապետութիւնը ապահու-Հայաստանի Հանրապետութիւնը ապահո-

5.- Հայաստանի Հանրապետու Թիւնր իր անվտանգութիւնը եւ սահմանների անձեռընմըխելիու Թիւնր ապահովելու նկատակով ստեղծում է Գերազոյն Խորհրդին ենթակայ սեփական գինուած ուժեր, ներջին գօրջեր, պետական եւ հասարակական անվտանգու-Թեան մարմիններ։

Հայաստանի Հանրապետութիւնը ունի ԽՍՀՄ սպառագինութեան իր մասնարաժնի իրաւունքը։

Հայաստանի Հանրապետութիւնը ինջն է որոշում իր թաղաբացիների զինուորական ծառայութեան կարգը։

Այլ հրկրների զօրաժիաւորումները, Նրանց ռազմական բազաները եւ չինութիւնները կարող են տեղարաչխուել Հայաստանի Հանրապետութեան տարածջում միայն նրա Գերագոյն ԽորՀրդի որոշմամը։

Հայաստանի Հանրապետութեան գինուած ուժերը կարող են օգտագործուել միայն գրա Գերագոյն Խորհրդի որոշմամը։

6.- Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս միջազգային իրաւունքի սուբժէջտ, վարում է անկախ արտաքին քաղաքականութիւն, անմիջական յարաբերութիւններ է Հաստատում այլ պետութիւնների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմաւորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպութիւնների գործունէութեանը։

7.- Հայաստանի Հանրապետութեան ազգային հարստութիւնը, չրային եւ այլ բնական պաչարները, տնտեսական, մտագային տարածութիւնը, իրային եւ այլ ժողովրդի սեփականութիւնն է։

Դրանց տիրապետման , օգտագործման եւ տնօրինման կարգը որոչւում է Հայաստանի Հանրապետութեան օրէնքներով ։

Հայաստանի Հանրապետութիւնը ունի ԽՍՀՄ ազգային հարստութեան, այդ թեում ոսկու պաչարների, ալմաստի եւ վալուտային ֆոնդերի մասնարաժնի իրաւունը։

ռայութիւններ:

9.- Հայաստանի Հանրապետութիւնը իր

իչխանութի, մամուլի, խղճի ազատութիւն. Օրէնսդիր, գործադիր եւ դատական Բազմակուսակցութիւն, կուսակցութիւնների իրաւամաւասարութիւն, իրաւապամ մարմինների եւ զինուած ուժերի ապաջաղաջականացում։

10.- Հայաստանի Հանրապետութիւնը ապահովում է հայերէնի, որպէս պետական լեզուի գործառութիւնը հանրապետութեան կեանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի սեփական համակարգ։

11 - Հայաստանի Հանրապետութիւնը սատար է կանգնում 1915 թուականին Օսմանեան Թուրջիայում եւ Արեւմտեան Հայաստանում Հայոց Ցեղասպանութեան միջազգային Տանաչման գործին։

12.- Սոյն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան մշակման, իսկ գործող
սահմանադրութեան մէն՝ փոփոխութիւնների եւ լրացումների կատարման, պետական մարմինների գործունէութեան,
հանրապետութեան նոր օրէնսդրութեան
մշակման համար:

Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի նախագահ՝ Լ. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի քարտուղար՝ Ա. ՍԱՀԱԿԵԱՆ

Երեւան 28 Օգոստոսի 1990 թուականի

Լեւոն Տէր Պետրոսեան՝ Խորհրդարանի Նախագահ

Կորպաչով Կը Շնորհաւորէ. Նորընտիր Նախագահը Կը Տեսակցի Ռիժքովի Հետ

Հայաստանի նորընտիր Խորհրդարանի նախագահ ընտրուհցաւ Հայոց
Համազգային Ծարժման Վարչութհան
պետ Լեւոն Տէր-Պետրոսհան, Ծարաթ, 4 Օգոստոսի երեկոյհան։ Քուէարկող 224 երեսփոխաններէն ՏէրՊետրոսհան ստացաւ 140 քուէ, երկրորդ թեկնածուն՝ Հայաստանի Համայնավար Կուսակցութհան Ա. Քարտուղար Վլադիմիր Մովսիսհան՝
ստացաւ 76 քուէ, իսկ 8 երեսփոխաններ իրենց ձայնը տուին Պարոյր Հայրիկեանի, որ ինքզինք նախագահա-

կան լաւագոյն թեկնածուն կը նկատէր։

Լեւոն Տէր-Պետրոսեանի ընտրութիւնը կը խորհրդանշէ Հայաստանի
մէջ նորածագ գերիշխանութեան եւ
ժողովրդավարութեան յաղթանակը։
Հայաստանի պատմութեան մէկ նոր
գյուխն է որ կր կսի։

Նախագահ Կորպաչով հեռաձայնային հաղորդակցութեամր ջերմօրեն շնորհաւորեց նորընտիր նախագահը, որ Մոսկուա գնաց Կորպաչովի կարգադրութեամբ տեսակցելու համար Վարչապետ Նիքոլայ Ռիժքովի հետ։

«Սաֆոնովը Վերադարձել Է»

Հայրապետին Շնորհաւորական Հեռագիրը

Մեծայարգ Տիար Լեւոն Տէր Պետրոսեան Նախագահ Խորհրդային Հայաստանի Գերագոյն Խորհուրդի

Երեւան

Յանուն Հայաստանհայց Առաքհլական Եկհղհցու հւ Հայ հաւատացհալ ժողովրդի որ ի Հայաստան եւ ի Սփիւոս աշխարհի, ի սրտէ ողջունում ենք Ձեր Ընտրու– թիւնը մեր Հայրենի Պետութեան բարձրագոյն Պաշտօ– նին ժողովրդի ազատ կամքով։

Ծնորհաւորում ենք Ձեր քաղաքացիական քաջութիւնը նման պատասխանատուութիւն ստանձնելու մեր Ազգի բազմադարեան Պատմութեան բախտորոշ ու տագնա–

պալի այս պահին։

Մադթում ենք Ձեզ պայծառ իմաստութիւն, գործարար անսպառ եռանդ եւ հայանուեր ներշնչանքներ՝ յամրապնդում մեր Մայր Երկրի քաղաքական անվտանգութեան, տնտեսական վերաշինութեան, ազգային մշակոյթի նոր ծաղկման ու ընկերային բարոյական բարեշրջման։

Սուրբ Էջմիածնից յղում ենք մեր աղօթքը եւ մեր Օրհնութիւնը վերածնուող մեր հայրենի հարազատ Պետութեան, անձամբ Ձեզ յարգարժան Տիար Նախա–

գահ եւ Ձեր թոլոր ազնիւ գործակիցներուն։

Ողջ լերուք գօրացեալ Սուրբ Հոգւով, զի Աստուած ընդ մեզ է։ Ամեն։

ՎԱԶԳԷՆ ԱՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Հէլսինքի, 6 Օգոստոս 1990

Հիւսէյն Թագաւոր Կը Հաստատէ Թորգոմ Պատրիարքին Ընտրութիւնը

Ցորդանանի Հիւսէյն Թագաւորը Երուսաղէմի Հայոց նորընտիր Պատրիարք Թորգոմ Արքեպս Մանուկեանի յղած է իր «շնորհաւորութիւնները եւ օրհնութիւնները», անոր յայտնելով «լաւագոյն մաղթանքները յաջողութեան եւ իրա-գործումը՝ Նորին Ամենապատուութեան վսեմ նպատակներուն եւ ձգտումներուն»:

՝ Այս պաշտօնական ճանաչումով հաստատուած կ՚ըլլայ Պատրիարքին ընտրութիւնը, զոր ճանչցած էր նաեւ Իսրայէլի

կառավարութիւնը։

Թորգոմ Պատրիարքին Գահակալութեան արարողութիւնը հաւանաբար կատարուի 27 եւ 28 Հոկտեմբերին։ Այս առթիւ Երուսաղէմ պիտի երթան աշխարհի չորս ծագերէն Հայց Եկեղեցւոյ Թեմական Առաջնորդները։ ուսնարորը Ոսորսւա հարչսւաց քես աւտնարարը Ոսորսւա հարուուց քես աւտնարարը հրատան անուսացայան աստարան անուր արտասան է սչհրան «Հրածայն դն արորսուաց է սչհրան արսության այս գիրսւսհրանարան արս արս արտարար հրանարարը՝ սնու ընտարար հրանարարան այս գիրսւսհրանարարան այս գիրսւսհրանարարան այս գիրսւսհրանարան այս գիրսւսհրանարան այս գիրսհրանարան այս այս գիրաւսնակար Ոսորսւա կարչսւաց քես։

Սաֆոնովի վերադարձով Արցախահայութիւնը իրասամբ կրնայ հարց տալ թէ նոր ինչ ազտոտ առաթելութեամր ան կր գտնուի Արցախ։

Պաքուի այս կամակոր գործավարը իր ժամանումին յաջորդ օրն իսկ, 4 Օգոստոսին, ձայնասփիւռով կոչ ըրած է Թէ բացուած է Ստեփա-նակերտ – Ղազախ – Իջեւան ինք-նաչարժի ճանապարհը, որ 300 քիլո-մէԹը երկարուԹիւն ունի, մինչ փակ պահուած կը մնայ Գորիսի ճամբան, որ միայն 20 քիլոժէԹրով կր րաժ-նէ Արցախը Հայաստանէն։

Սաֆոնով յայտարարած է, որ մարդատար ինքնաչարժերուն պիտի ընկերանան գինուորներ, որոնք պիտի պահովեն երթեւեկի անվտանգութիւնը։

Սկզբնական օրերու վարա
հումէն ետք, 7 Օգոստոսին, երբ

հումէն ետք, 7 Օգոստոսին, երբ

հումեր կայարան գացած են, անոնգ

կողմէ պաշարուած եւ ումրագործնե
կողմէ պաշարուած են ումրակալուած են

հուզարկուած են։ Ձերբակալուած են

հուտծ) որպէս «տեղացի»։ Ձերբակալ
ուածները նոյն օրը ազատ ար
ձակուած են։

անուտիով փակել Ոաբփարակենակ անուտիով փակել Ոաբփարակենակ հարած է՝ «բորսաան հերակարութ անության արև ուսիչ դաւամին դիած հարև Հայթնել։ Որսրն ին վե հարար է Ունաիս հաւամին դիած հարար է Ունաիս հաւամին դիած հարարան արևան հարարարութ հարարան արևան արևան արևան հարարան արևան արևան արևան արևան հարարան արևան արևան

Թորգոմ Պատրիարք Պիտի Ստանայ Թագաւորական «Ֆիրման»ը

Երուսաղէմի Պատրիարք Թորզոմ Արքեպս. Մանուկեան, այս օրերս

Ամման պիտի մեկնի գոյգ առաքելութեամբ։

Թորզոմ Սրբազան պիտի ընդունուի Թազաւորական Պալատ, Հիւսէյն Թազաւորէն ստանալու համար իր Պատրիարքական ընտրունեան աւանդական հաստատագիրը կամ՝ ֆԻՐՄԱՆը։ Ան հանդիպումներ պիտի ունենայ նաեւ տեղւոյն հայ զաղութին ներկայացուցիչներուն հետ եւ պիտի պատարագէ Ս. Թադէոս Հայց. Եկեղեցւոյ մէջ։

իր ատենին հաղորդած էինք, որ Հիւսէյն Թազաւոր իր «շնորհաւորութիւնները եւ օրհնութիւնները» ղրկած էր նորընտիր Պատրիարքին։ «ֆիՐՄԱՆ»ը, կուզայ Օսմանեան շրջանի վեհապետներէն, որոնը նման փաստաթուղթով կր ճանչնային Հայ Պատրիարքութեան

առանձնաշնոր հումները եւ իրաւունքները։


Պատմագէտներու Տամաձայն, արաք Խալիֆ Օմար Իպն Ըլ Խաթթապն է որ առաջին հաստատագիրը տուած է Երուսաղէմի Հայոց Աբրահամ Պատրիարքին։ Հաստատագիրը ոչ միայն կը Թուէ իրաւունքներն եւ առանձնաշնորհումները հայ եկեղեցւոյ, այլ նաեւ կ՚ապահովէ անոր ամբողջականութիւնը եւ Ս. Տեղեաց Հայոց պաշտպանութիւնը։

Դարեր ետք, Սուլტան Սաքահէտտին հրապարակեց Գիր մր, ուր Նաեւ կը Ծանչնար եւ կը վերահաստատեր հայերուն առանձնաշնորհումները Ս. Տեղեաց մէջ։ Երբ Օսմանեան Թուրքերը գրաւեցին Երուսաղէմը, անոնք օրինականացուցին աւանդութիւնը, իրենց հրովարտակներուն մէջ կրօնական պետերուն յանձնելով որոշ իրաւունքներ եւ առանձնաշնորհումներ։

Ամմանի Պալատին մէջ ընդունելուԹեան ընԹացքին, Պատրիարք Սրբազանը կարծ ուղերձ մը պիտի արտասանէ, որուն օրինակները պիտի բաշխուին մամուլին։ Այս երկրորդ անգամն է որ Հիւսէյն Թագաւոր «ֆԻՐՄԱՆ» մը պիտի տայ հայ Պատրիարքին։ Առաջինն էր Եղիշէ Պատրիարը Տէրտէրեանը։ Յորդանանէն վերադարձին, տեղի պիտի ունենայ գահակայական պաշտօնական արարողութիւնը։

Շուրջ եօթ հազար հայեր կ^յապրին Յորդանանի մէջ, ուր տէր են անձնական նախաձեռնութիւններու։ Շատերուն գործն է ոսկերչութիւնը, գոհարավանառութիւնր կամ լուսանկար,ութիւնը։

Յորդանանի մէջ հայկական ներկայունիւնը հին արմատներ ունի։ Անոնք եկած էին որպէս ուխտաւորներ։ Հայեր կ՚ապրին մայրաքաղաք Ամմանի, Ջերքայի, Սալնի եւ Մաֆրաք աւաններուն մէջ։



Միւռոնօրհնութիւնը Յետաձգուած 1991-ին

Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորճուրդի Ատենապետ Սիոն Արքեպս. Մանուկեան կը ճաղորդէ որ Հոգեւոր Խորճուրդը, նախագաճութեամբ Վեճափառ Հայրապետին, «իր 28 Օգոստոսի նիստին քննարկելով Սեպտեմբեր 80ին նախատեսուած Սրբալոյս Միւռոնի օրճնութեան ճետ առնչուած ճարցերը, եկաւ այն եզրակացութեան, որ ի նկատի ունենալով մեր երկրի այժմեան պայմաններուն մէջ կազմակերպչական դժուարութիւնները, նպատակայարմար գտաւ միտոնօրճնութիւնը կատարել յառաջիկայ տարի, 1991 թուականի 29 Սեպտեմբերին»։



Գարեգին Արքեպս. Գազանձեան Պատրիարը Թուրքիոյ Հայոց

ՈւրախուԹեամբ կը ծանուցանենք ԹԷ Դշ. 5 Սեպտ. 1990-ին, Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրուած է ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ԳԱԶԱՆՃԵԱՆ, Լուսարարապետը Երուսաղէմի Հայոց ՊատրիարքուԹեան եւ Նախկին Առաջ**ն**որդը Աւստրալիոյ եւ Նոր Ջելանտայի։

Այս ուրախ առիթով Թեմիս Առաջնորդ Ս. Հայրը հետեւեալ շնորհաւորա-

գիրը ուղարկեց Նորընտիր Պատրիարքին.-

ԱՄենապատիւ Տ. Գարեզին Ս. Արքեպս. Գազաննեան

ບາກກຸນທຸກກຸ້ Պພທກຸກພກຸຊ ທີ່ກຸຊຸພາເພງກg

Երուսաղէմ

Ամեն. Ս. Պատրիարք Հայր,
Թրքահայոց Պատրիարքական ԱԹոռի վրայ Ձեր Պատրիարք
ընտրունեան առինով, յանուն Աւստրալահայ Գաղունի ու Թեմի, կու
զանք շնորհաւորել Ձեզ եւ մաղնել ամենայն բարիք ու յաջողունիւն
եւ նորանոր նուանումներ Ձեր առաքելունեան ըննացքին։
Աւստրայահայ Թեմական Խորհուրդը, Եկեղեցական

դասը, Սիտնիի ու Մելպուռնի եկեղեցական վարչուԹիւնները, իրենց յարակից մարմիններով, կը միանան իմ շնորհաւորուԹեան ու բարե-

մաղթութեանց:

Եղբայրական սիրով, Աղօքակից՝ յ Աղան Եպս. Աստ իօգեան Աղան Եպս. Պալիօգեան Առաջնորդ Հայոց Թեմին Աւստրալիոյ եւ Ն.Ջ.-ի

6 Սեպտեմբեր 1990

Սիտնի

Կիր. 9 Սեպտ.-ին, ի ժամ Ս. Պատարագի, Առաջնորդ Ս. Հայրը ի լուր ժողովրդեան ծանուցանեց այս ուրախ լուրը, բարեմաղԹուԹիւններ կատարեց Նորընտիր Պատրիարքի կենաց արեւշատուԹեան ու գործոց յաջողուԹեան համար։

_ ԼՈՅՄ-ի ԷջերԷն կրկին անզամ կը շնորհաւորենք Մեր Թեմի նախկին

Առաջնորդը ու ներկայ Պատրիարքը։

ԲԱՐԻ ԱՊԱԶԻՆՈՒՄԻ ՄԱՂԹԱՆԶ

Կը տեղեկանանք Թէ, Տիկին Հիլտա Զօրլու, ենթարկուած է վիրաբուժական գործողութեան մը եւ ապաքինումի շրջան մը կը բոլորէ։

Այս առիթով, յանուն Առաջնորդ Սրբ. Հօր, Քահանայից եւ Սարկաւագաց Դասուն, Թեմական Խորհուրդի, եկեղեցւոյ Վարչութեան, Տիկնանց Վարչութեան եւ բոլոր մարմիններուն, բարի ապաքինումի լաւագոյն մաղթանքներ Տիկին Հիլտա Զօրլուին։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՋ

Տէր եւ Տիկին Պետրոս Զօրլու, իրենց շնորհակալութիւնը կր յայտնեն Առաջնորդ Սրբազան Հօր, քահանայ Հայրերուն, Թեմական Խորհուրդին, Եկեղեցւոյ Վարչութեան, Տիկնանց Վարչութեան, Լուսաւորիչ Դպրաց Դասի Վարչութեան եւ անդամներուն, որոնք իրենց այցելութեամը, ծաղկեփունք ուղարկելով, հեռաձայնով եւ նամակաքարթերով, բարի ապաքինում մաղթեցին։

Իբրեւ Պետական Դրօշ , Եռագոյնը Փոխարինեց Կարմիր-Կապոյտ-Կարմիրը

Երեւան, 24 Օգոստոս,— ՌԱԿ-ի մամուլի Երեւանի մեր թղթակիցը՝ ընկ. Յակոբ Աւետիքեան կր ճաղորդէ.—

Այսօր, կեսօրութնե սկսեալ, միայն մեկ եւ միակ գրօչ կր գարդարե Հայաստանի Հանբապետութեան Խորհրդարանին ճակատր։ Ձայներու թացարձակ մեծամասնութեամր որոշում կայացնելե ետք, Խորհրդարանը իրրեւ պետական գրօչ որդեզրեց նռագոյնը՝ հորիզոնական կարմիր-կապոյտ-նարնջագոյն գոյներով եւ IX2 Համետատական չափով։ Հանդիսաւոր պայմաններու տակ, վար առնուեցաւ կարմիր-կապոյտ-կարմիր դրօչը՝ իր մուրճ-մանգաղով եւ աստղով, ու յանձնրւեցաւ Պատմութեան Թանգարանին։

Նոյն քննարկման ժամանակ, որոշունցաւ Հանրապետութեան գինանշանն ու Հիմնր (օրՀներգ կամ մաղթերը) որդեգրելու Համար մրցանք յայտարարել, պայմանաժամ տալով մեկ ամիս։ Սոյն կապակցութեամբ, երբ երեսփոխաններեն մեկը առաջարկեց իրթեւ օրհներգ պահել 1918–1920 Թուականներու պետական հիմնը՝ «Մեր Հայրենիք, Թչուառ անտեր», նախագահ է. Տեր Պետրոսեան խստօրեն առարկեց, Թելադրելով ուջադիր կարդալ անդր բառներ։ Իսկ երբ երեսփոխան Կտրիճ Սարդարեան առաջարկեց իրթեւ գինանչան որդեզրել Մ. Սարեանի հեղինակութիւնը հանդիսացող՝ Խորհ Հայաստանի գինանչանը, անկե գեղչելով մուրհ-մանդադր, աստղը եւ «պրոլետարներ բոլոր երկրների, միացեր»ը, նախագահը թելադրեց սպասել յայտարարուած մրցանքի արդիւնքներուն։

Իրաբ - Կուսակրօն Քահանայական Ձեռնադրութիւն

Յունիս Յին, Իրաքահայոց Առաջնորդ Աւազ Եպս. Ասատուրեան, կուսակրօն Ջահանայ ձեռնադրած եւ օծած է Սարգիս Սրկ. Յովհաննէսեանը, որ յաջորդ օրը ստացած է Վեղարը, եկեղեցական արարողութեամբ։

Նորա օծ՝ կրօնաւորը վերանուանուտծ է Վահան Աբեղայ Յովհան-

նէսեան։

Ամենայն Հայոց ԿաԹողիկոսը, հեռագիրով մը շնորհաւորած է ձեռնադրութիւնը։

Հ. Ե. Ե. Մ.-Ի ՀԱՅ ԲԵՄ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ Կը ներկայացնէ

____ թրր 5 ԽԵԼԱԳԱՐԸ___ Հեղինակ՝ 3.3. ԱՄԻՐԵՆՑ

Բեմադրութեամբ՝ ^Պրն. Գոգոր Պագլայի

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 13 Հոկտ. երեկոյեան ժամը 7.30-ին, Քուրինկա Քոլէնի սրահին մէջ, ETON ROAD — LINDFIELD:

Տոմսեր ստանալու համար դիմել, եկեղեցւոյ Գրասենեակ, եկեղեցւոյ Վարչութեան եւ Երիտասարդացի անդամներուն։

Տոմսերու գիներ. – Մեծերու համար` 15 Տոլար՝ Փոքրերու եւ Թոշակառուներու՝ 10 Տոլար։

Entimuch Unn U. Amnininunn

Երեւանի Քաղաքային Կոմիտէի 16 Օգոստոսի լիակատար նիստին, Ա. Քարտուղարի եւ Պիւրոյի անդամի պաշտօններէն հեռացուած է Գրիգոր Ասատրեան, որուն զոյգ հանգամանքները ստացած է *Ստեփան Պօղոսեան* , Հայաստանի հրատարակութիւններու պետական Կոմիտէի նախագահը։

Նիստին հլոյթ ունեցած է Կենտկոմի Ա. Քարտուղար Վյա-

դիմիր Մովսիսեան։

Ս. Էջմիածնի Կր Վերադարձուին Հոգեւոր Ճեմարանը Եւ Այլ Շէնքեր

ԱՐՄԷՆՓՐԷՍ - Հայաստանի Նախարարաց Խորհուրդը րնթացք տալով Ս. Էջմիածնի խնդրանքին, որոշեց Կաթոդիկոսութեան վերադարձնել նախկին Հոգեւոր ձեմարանի չէնքը, որ ներկայիս կր գործածուի որպէս Երեւանի Պատկերասրանի մասնանիւդ։ Մայր Աթոռը կր ծրագրէ ձեմարանը ծառայեցնել նոր եկեղեցականներու պատրաստութեան, բաւարարելու համար ներքին եւ արտասահմանեան Թեմերու յարաձուն կարիքները:

Մինչեւ այս տարուան վերջը, նոյնպես Ս. Էջմիածնի պիտի վերադարձուին տպարանի չէնքը, գոր կը գործածէր Գիտու-

*թեանց Կա*Տառը:

Էջմիածնայ Կաթողիկոսութեան պիտի յանձնուի նաեւ անոր համալիրին յառող հողամասը, որ գրաւուած էր գինուորականութեան կողմէ։ Նոյնպէս պիտի յանձնուի Արթիկի չրջանի Հառիճավանքի համայիրը։ Հառիճավանքը 7-13 դարերու նայ ճարտարապետութեան գյուխ-գործոցէն մէկն է, որ կարեւոր դեր ունեցած է հայ ժողովուրդի մշակութային կեանքին մէջ։

Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը յանձնառու եղած է վերականգնել Լենինականի Ամենափրկիչ եկեղեցիին, որ քանդուած էր երկրայարժին Հետեւանքով։ Աշխատանքները

պիտի աւարտին 1993ին։

Հայաստանի պատմութեան եւ Մշակոյթի յուշարձաններու պահպանման եւ օգտագործման գլխաւոր վարչութեան յանձնարարուած է մինչեւ 1990-1991ին աւարտել Ս. Էջմիածնի յանձնուած Տաթեւի Վանջի, Մակարավանջի, Գանձասարի, Ամարասի, Հաղպատի վանքի չէնքերու վերականգման եւ : դղժմգմատասիչա մանբողոմ

Ստեփան Պօդոսեան Կր Փոխարինէ Գալուստ Գալոյեանո

Շարաթ կէսօրէ հաջ Երեւանի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Համայնավար Կուսակցութեան Կենտկոմի լիագումար նիստը, որուն րնթացքին Հայաստանի Հրատպետկոմի նախագահ եւ ատենին ռատիօ-Հեռուստատեսութեան կոմիտէի նախագահ՝ պատմարան Ստեփան Պօղոսհանը ընտրուհցաւ Գ. Քարտուղար, այդ պաշտօնին վրայ փոխարինելով գաղափարախօսական գծով կենակոմի քարտուղար եւ նոյնպէս պատմարան Գալուստ Գայոյեանը։

Ստեփան Պօղոսեան նչա-Նակուեցաւ Նաեւ, միաժամանակ, Երեւանի Քաղկոմի Ա. Քարտուղար, փոխարինելով նոյն պաչտօնին վրայ Գ. Ասատրեանը։

Ըստ դէտերու, այս փոփոխութեիւնները ցոյց կուտան Համայնավար Կուսակցութենէն ներս դեմոկրասիի ուժերու աչխուժացումը։ Այս ընթացքը չարու-Նակուելու պարագային, յառաջիկային կրնան բազմաթեւ նոր փոփոխութեւններ տեղի ունենալ կուսակցութենէն ներս ։

Տէր Պետրոսեան կ'այցելէ Ս. Էջմիածին

Հայաստանի Խորհրդարանի նորընտիր Մախագահ Լեւոն Տէր Պետրոսեան, Oqnumnu 5hb, V. Էջմիածին այցելած է, ստանալու համար IIմենայն Հայոց Հայրապետին օր հնութիւնները։

Բացակայութեանը վեճափառին, որ Հելսինքի կը գտնուէր, Տէր Պետրոսեան ընդունուած է Մայր Աթոռի Դիւանապետ ներսէս Արթե-

պիսկոպոս Պոցապալեանի կողմե։

ԼՈՒՐԵՐ ԱՌԱԶՆՈՐԴԱՐԱՆԵՆ

62. 23 Օգոստ.-ին, Թեմիս Առաջնո**ր**դ Ս. Հայրր, ընկերակցութեամը Թեմական Խորհուրդի Ատենադպիր ՏոքԹ. Անդրանիկ Քէշիշեանի, հանդիպում մր ունեցաւ Հասարակական գործիչ ու Բժիշկ Տոքթ. Յարութիւն Սաղրրեանի հետ, որ Լոս Անջլրսէն քաղաքս կր գտնուէր։

Ուր. 24 Օգոստ.-ին, ՏոքԹ. ՅարուԹիւն Սաղըրեան, ընկերակցուԹեամբ Տիար Յով հաննէս Տէմիրճեանի, քաղաքավարական այցելութիւն մր տուաւ Թեմիս Առաջնորդ Ս. Հօր, ուր եւ գաղափարներու փոխանակութիւն տեղի ունեցաւ Հայրենիը-Սփիւռը, եւ եկեղեցական կեանը հարցերու շուրջ։

Բշ. 27 Ognum.-ին Թեմիս Առաջնորդ Ս. Հայրը, ընկերակցութեամը Անտիոթի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ, Գերշ. Տ. Ճիպրան Եպս.ի. Տիւրն էին Խորհրդային Միունեան Սիտնիի Ընդհանուր Հիւպատոս Shup Չերպաքովի, ուր եւ գաղափարներու փոխանակութիւն տեղի ունեցաւ Սովետ Միութեան փոփոխութիւնները, եկեղեցական հարցը եւ Հայաստանի ներկայ դրուԹիւնը։

Քшпшри Տիւրшршր գտնուող Տոрд. Зшрпідрій Ошпррышь հрищириկային բանախօսութիւն մր տուաւ, որուն ներկայ եղաւ Եկեղեցւոյս

Ատենապետ Shan Կարo ՍէԹեան:

92. 28 Ognum.-ին Թեմիս Առաջնորդ Ս. Հայրը Գանպերա մեկնեցաւ, ուր հանդիպում ունեցաւ Յորդանանեան Դեսպանի հետ, ինչպէս նաեւ այցելեց Խորհրդային ՄիուԹեան Աւստրայիոյ մէջ Դեսպան ՏոբԹ. Սամոնելքրնին ու բարի ճանապարհ մաղնեց երկիր վերադառնալուն առինով։

Դշ. 29 Օգոստ.-ին տեղի ունեցաւ Աւստրալիոյ Եկեղեցիներու Խոր-Sուրդի Վարչական ժողովը, որուն ներկայ եղաւ ու գործօն մասնակցու-

Թիւն բերաւ Թեմիս Առաջնորդ Ս. Հայրը։

Ուր. 31 Օգոստ.-ին վերակացմեալ Վահան Թէքէեան Հայկական Մշակութային Միութեան վարչութիւնը քաղաքավարական այց մր տուին Առաջնորո Ս. Հօր եւ ստացան Ս. Հօր օրհնութիւնը։

Շր. 1 Սեպտ.-ին Առաջնորդ Ս. Հայրը մեկնեցաւ Գանպերա, ուր ներկայ եղաւ ի պատիւ Տոթը. Սամոթէյքրնի տրուած ընթրիքին։ Վսեմ. Դես-

պանը իր գնահատականը յայտնեց հանդէպ Հայ գաղութին։

կիր. 2 Սեպտ.-ին Պաղտատէն քաղաքս բժշկական համագումարի ներկայ եղող Տոքթ. Պօղոս Պօղոսեան, քաղաքավական այցելութիւն մր տուաւ Արաջնորդ Ս. Հօր եւ գաղափարներու փոխանակութիւն տեղի ունեցաւ երկու գաղութներու ներկայ վիճակի մասին։ Յիշեալ ընդունելութեան ներկայ եղան Թեմական Խորհուրդի եւ Եկեղեցւոյ Վարչութեան կարգ մր վարչականներ։

Գշ. 4 Սեպտ.ին Առաջնորդ Ս. Հայրը ներկայ եղաւ Գորգի ցուցադրու-Թեան, որը կազմակերպուած էր նիւ Սաութ Ուէյլզի ազգային գրադարանի

կողմէ Տիար ժագ Քատրիի կողմէ տրամադրուած գորգերով։

Տեղին է լիշել որ Հայկական եւ Ղարբաղեան գորգերը տիրապետող

գորգերն էին։

կիր. 9 Սեպտ.-ին Հայ ԿաԹողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Վարժարանը կազմակերպած էր արտասանական մրցոյն մր, որ շատ լաջող անզաւ։

3իշեալ Արտասանական մրցոյնին ներկայ եղաւ Առաջնորդ Ս. Հայրը,

որ եւ կատարեց փակման խօսքը։

Ուր. 14 Սեպտ.-ին ՊլաբԹաուրնի մէջ տեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն կազմակերպութեամբ Հռովմէական Կաթոլիկ եկեղեցւոլ -Փարամաթա Առաջնորդարանի-, իրենց Նիւ Ս. Ուէյլգի եկեղեցիներու խորհուրդին միանալուն առիթով։

Թեմիս Առաջնորդ Ս. Հայրը այլ հոգեւոր պետերու կողքին ներկայ

եղաւ լիշեալ արարողութեան։

Սոարողութենչ և մաս մր գուգադրուեցաւ ԷՍ Պի ԷՍ հեռատեսիլի Վոքս Փոփուլի ծրագրէն 23 Սեպտ. ին։ A.R.A.R.@

Ուր. 21 Սեպտ.-ին ԷՍ ՊԻ ԷՍ Կայանր հաւաքոյթ րնդունելութիւն մր կազմակերպած էր, յսելու պատասխանատու անձանց կարծիքները։ 3/2 եայ հաւաքոյն ընդունելունեան ներկայ եղաւ Թեմիս Առաջնորդ

U. Zwinn: Շր. 22 Սեպտ.-ին Վերակազմեայ Վահան Թէքէեան Հայկական Մշատ կութային Միութիւնը գրական երաժշտական երեկոյ մր կազմակերպած

էր ի պատիւ Վահան Թէք է եանի եւ Կոմիտաս Վարդապետի:

3իշեայ երեկոյին ներկայ եղաւ Առաջնորդ Ս. Հայրը, ընկերակցու-Թեամբ Նորայր եւ Պարթիւ Քահանայ Հայրերու, Թեմական ու Եկեղեցական Վարչութեանց ներկայացուցիչներու, գլխաւորութեամբ Եկերեցin լ Ատենապետ Shap Կարօ Սէթեանի։

Կիր. 23 Սեպտ.-ին Արժ. Տ. Պարթեւ Քահանայ Գարագաշեան, ընկեոակցութեամբ Եկեղեցւոյ Ատենապետ Տիար Կարօ Սէթեանի, ներկայ երան նիւ Սաութ Ուէյլգի Եունայթինկ եկեղեցւոյ նոր Մօտրրեյթորի պաշտօնակոչման արարողութեան եւ անոր լաջորդող հիւրասիրութեան։

Տէր Հայրն ու Ատենապետը Հայց. Եկեղեցւոյ ու Առաջնորդ Ս. Հօր շնոր հաւորու Թիւններն ու բարի մաղ Թանքները փոխանցեցին նոր Մօ-

տորել Թորին: նոյն Օրը Արժ. Տ. նորայր Քահանայ ԲաԹանեան, Առաջնորդ Մ. Հօր եւ Թեմական Խորքուրդի արտօնուԹեամբ, ներկայ եղաւ Համազգային Մշակութային Միութեան Բանոյեանի Կեղրոնի հողի օրհնութեան, ուր սարկաւագաց դասի հետ կատարեց Հողի օրհնունիւնը եւ մասնակցեցաւ լաջորդող հիւրասիրութեան:

ՏՕՆԱՑՈՅՑ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒԱՅ

13 Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եդի> 25ի, Մովսիսի բերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեցւոյն։

20 Սրբոց աւետարանչացն՝ Մատքերսի, Մարկոսի, Ղուկասու եւ Յով հաննու։

4hn. 28 4hhs 10112.

เการศุกาส

Շաբաթ 15 Սեպտեմբերին, Սիտնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, տեղի ունեցաւ մասնաւոր ՀՍԿՈՒՄի արարողութիւն։

նիրակի 16 Սեպտեմբերին, տեղի ունեցաւ Եպիսկոպոսական Սուրբ

եւ Անման Պատարագ։

Պատարագեց՝ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աղան Սրբ. buy. "wihogbwy:

Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարուեցաւ եկեղեցւոյս ԼՈՒ-

ՍԱռորոշ Դարաց Դասի կողմե:

ՀԱՅՐ ՄԵՐի պահուն, Սրբազան Հայրը քարոզեց, վեր առնելով wwyh hungsnepnn:

Պատարազի աւարտին, տեղի ունեցաւ ԱՆԴԱՍՏԱՆ։

uvehLhuu

Կիր. 22 Յուլիս 1990ին, Տեաոն Մերոյ Յիսուսի Քրիստոսի Այլակերպունեան տօնին առինով, Աննիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, տեղի ունեցաւ կուսակրоն քահանայի - Արեղայ - ձեռնադրութիւն։

Ղեւոնդ Արը. Չէպէյետն, պատարազեց եւ Արեղայ ձեռնադրեց Դպրեվանքի Ընծայարանի շրջանաւարտ Յարութիւն Սրկ. Վարդանեանր եւ օծման պանուն զինք անուանակոչեց Փառեն Աբեղայ։

«ԱՁԱՏ ՕՐ»Ի «ԱԶԱՏ ՆԱՄԱԿԱՆԻ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

«Ազատ Օր»ի Երհքշաբթի 3 Յուլիս 1990-ի թիւին մէջ, «Ազատ Նամականի» վերնագրին տակ, Ա. Աստ ուածատուրեանի ստորագրութիւնը կրող «Սփիւռքահայ Եկհղեցւու Բարեկարգութեան Աներաժեշտութիւնը ի տես Աւստրիոյ Հայ Համայնքի Ներքին Քայքայումին», յօդուած մը լոյս տեսաւ, որուն ընթերցումը ցոյց կուտայ թէ տխուր կիրքերէ եւ լետին նպատակներե ստորագրուած գրութիւնը ոչ միայն «անձնական հաշիւներ մաքրելու բնոյթ կր կրեն». այլ աւելի հեռուն կ՝երթան անոնց դրդապատճառները։

Հաւանաբար նոյն բովանդակութեամբ գրութիւն մր եւս հրատարակուած է վիեննայի «Վօխընփրէսէ»

շաբաթաթերթին մէջ։

Աւստրիոլ Հայ Առաքելական եկեղեցւոյ համայնքի նորընտիր վարչութիւնը, որուն մաս չէ կազմած այլեւս Ա. Աստուածատուրեան 23 Յունիսեն օրինաւորապէս, թողոքի նամակ մր ուղղած է «Վօխընփրէսսէ» շարաթաթերթի խմրագրութեան, ուր կը բողոքէ Սրբազան հօր հասցէին կատարուած գրրպարտութիւններուն։

Bօդուածին հրատարակութիւնը զայրոյթ յառաջացուցած է Աւստրիահայ համայնքի անդամներուն մօտ, որոնք իրենց գրութիւններու եւ բացիկներու հրատարակութիւնը կը խնդրեն մեզմէ, որպէս բացատրութիւն եւ զայրոյթ այս տխուր երեւոյթին առթիւ։

Մենք լաջորդաբար պիտի հրատարակենք միայն այն գրութիւնները, որոնք գաղութին մէջ պատահած եղելութիւններուն լուսաբանութիւններ կր սփռեն**։**

Ստորեւ կը հրատարակենք Աւստրիոյ Հայ Առաքելական Եկեղեցական համայնքի պատասխանը վիեննական շարաթաթերթին:

Ն. Ա.

«ՎՕԽԸՆՓՐԷՍՍԷ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԻԵՆՆԱ

Ձեր Թերթի 26րդ թուի յօդուածին առընչութեամը, Աւստրիոյ Հայ Առաքելական Եկեղեցական Համայնքի Վարչութիւնը բացարձակապես կր մերժե այդտեղ հրատարակուած զրպարտութիւնները։

Սոյն յօդուածին մեջ յառաջ բերուած մի շարք արտալալտութիւններ՝ չեն համապատասխաներ հշմարտութեան։ Ճիշդ չէ որ Աւստրիոյ Հայ Համայնքը սոյն կարծեցեալ դէպքերու հետեւանքով ծանրօրեն ցնցուած է։ Գերշ. Պատւոյ Պրոֆ. Դր. Մեսրոպ Եպս. Գրիգորեան թազմաթիւ տարիներէ ի վեր խղճմտութեամբ կր կատարէ իր հովուական պաշտօնը։

ւաբար Ձեր յօդուածին մեջ Սրբազանին անունով յիշւած կարծեցեալ յայտարարութիւնները մեզ համար աներեւակայելի են։ Արդարեւ իրականութիւնը այն է՝ որ Հայ Համայնքի մեջ փոքրամասնութիւն մր, մասամբ անձնական եւ մասամբ կուսակցա-քաղաքական պատճառներով, որոշ ժամանակէ մը ի վեր կր փորձէ Սրբազանը հեռացնել իր պաշտօնեն եւ հնարովի սեռային դէպքեր իբր պատրուակ կ'օգտագործէ։

Եկեղեցական Վարչութիւնը համոզուած է դր. Մեսրոպ Եպս. Գրիգորեանի անմեղութեան մասին. եւ այս՝ հակառակ աստուածարանութեան աւետարանական ուսանողուհիի մր հնարուած հրդմնաւոր յայտարարութեան։ Արդէն այս օրիորդը պատրաստակամութիւն յայտնած էր յետս կոչելու իր արտայայտութիւնները։ Ըստ երեւոլթին՝ հարցի իրաւական հետեւանքները նկատի առնելով, - զրպարտութեան պատճառաւ պատժական դատավարութիւն, - իր փաստարանի միջոցաւ նա որոշած է լիտս կոչումը գոնէ գրրաւոր չկատարել։ Այլապէս նա բազմիցս հաստատած է՝ որ իր յայտարարութիւնները կատարեց ազդեցութեան ներքոյ Համայնքիս կարգ մը անդամներու, որոնք վերյիշեալ փոքրամասնութեան կր պատկանին։

Սրբազանին օրինաւորապէս պաշտօնէ արձակումը ոեւէ ատեն տեղի չէ ունեցած։ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Գլուխը, Նորին up. Օծութիւն վազգէն ll. Կաթողիկոս յերսիածին, պարզապես Վիեննայի մէջ գտնուող աստուածարանութեան ուսանող մը՝ Սրբազանին որպես օգնական նշանակեց, իր հովուական պարտականութիւններուն մէջ։ կարծեցեալ պաշտօնազրկութեան դատական հերքումը երբ եւ իցէ չէ կատարուած եւ անհրաժեշտ ալ չէր, քանի Դր. Գրիգոր**հան Եպիսկոպոս՝** որպես Հոգեւոր Հովիւ եւ Հայրապետական Պատուիրակ Կեդրոնական Եւրոպիոյ եւ Ծուեդի՝ կը շարունակե իր պաշտօնները։

Ձեր եզրակացութիւնը, թէ Հայ Համայնքը պառակտուած է, ճիշդ է միայն այն իմաստով՝ խմբակ մը կայ, որ կը ջանայ Սրբազանին հեռացումը իրականացնել, եւ ուրիշ խումբ մը՝ որ չի ցանկար այս պայքարը հրապարակ հանել, վասնզի ճիշդ չի գտներ կրօնական համայնքի մը հակամարտութիլնը մամլոյ մեջ բերթել։ Ցամենայն դեպս հանրութեան առջեւ այս «Լոող մեծամասնութիւնը» խորապես համոզուած է մեր Սրբազանի անմեղութեան մասին, ինչ որ վերջին օրերու հեռաձայնային անհամար խօսակցութիւններ եւ հաղորդակցութիւններ ցոյց uniha:

> LUP2nhophs. ԱՒՍՏՐԻՈՑ ՀԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՑՆՁԻ



FEASTDAYS IN OCTOBER

Saturday 6th - 72 Disciples of Christ

Saturday 13th - Holy Translators

Saturday 20th - 4 Evangalists - Mathew, Mark, Luke

and John

Sunday 28th - Discovery of the Holy Cross

On the 16th of August Exaltation of the Holy Cross was celebrated by the Primate Bishop Aghan Baliozian. The Primate delivered the sermon and presided over the blessing of the 4 corners.

DIOCESAN NEWS

23 August - His Grace Bishop Baliozian and Dr Keshishian met Dr H Sagherian from Los Angeles

24 August - Dr Sagherian accompanied by Mr Hovannes

Demirdjian paid a courtesy visit to the Primate.

27 August - The Primate met the Co ncul General of USSR and discussed matters concerning the church and community.

27 August - Dr Sagherian gave a lecture at the Australian Armenian Association Hall. The chairman of the Church Council Mr Garo Setian attended.

28 August - The Primate visited Canberra to bid farewell to the USSR Ambassador and met the Jordanian Ambassador.

29 August - The Primate took an active part in the Australian Council of Churches executive meeting.

31 August - The newly formed Vahan Tekeyan Armenian Cultural delegation paid a courtesy visit to the Primate to inform him of their establishment and to receive his blessings.

1 September- The Primate visited Canberra to dine with the Ambassador of USSR who is to leave his post. The Ambassador expressed his fondness of the Armenian community.

